

սրտի տէր կիները, տեղի տալով անոնց որոնք իրենց ֆիզիքական շնորհներովը միայն կոչուած են ընտանեկան եւ ընկերային կեանքը յեղաշրջելու:

Զօհրապին նորավէպերը սակայն ասիկա հաստատելու բնոյթը ունին:

Դիտեցէ՛ք. իր քառասունէ աւելի նորավէպերուն մէջ՝ չկայ մէկ կին մը գոնէ որ ուղղամիտ, պարկեշտ եւ արտով ու մտքով հաւատարիմ մնացած ըլլայ իր սիրոյն:

Սկսինք իր ամենէն սուրբ վէպերէն. ի՞նչ է *Տալիլան*. փոփոխամիտ, թեթեւաբարոյ աղջիկ մը:

Ի՞նչ է Անսիկը, *Կարծեմ թէ*ին հերոսուհին. կեղծիքի գլուխ-գործոց մը:

Ի՞նչ է *Սառան*, զոր ինք առաքինի կին մը կը համարէ. հասարակ պջրուհի մը որ իր ամուսնին հետ կ'ապրի սիրով, եւ ուրիշ մըն ալ կը կապէ իրեն խօստումներով:

*Վերադարձը*ին Մաքրիկը, *Դինակը*ին մանիշակաբոյր տիկինը, *Երջանիկ մահը*ին հերոսուհին սրտի եւ մտքի մեղաւորներ են ամէնքն ալ: *Խարիսխը*ին Սուրբիկ հանրմն ալ, գերազանցօրէն անբասիր կինը, սոսկալի տիպար մըն է շահախնդրութեան որ սակարկութիւն կ'ընէ Աստուծոյ հետ իր բարեպաշտութեան մասին, եւ իր ջերմեռանդ աղօթքներուն ու վառած մոմերուն փոխարէն վարձք կը պահանջէ անկէ:

*Առջի սէր առջի բարի*ին Թագուկ տուտուն միայն բացառութիւն կը կազմէ այդ թափոքին մէջ, բայց ան ալ անցեալին կը վերաբերի, մեր սերունդէն չէ:

«Իր դէմքը... խորշոմներով լեցուն, կաթնապտորին երեսը ծածկող պարուտակին կը նմանի, մաքուր ու փոթ փոթ»:

Աւելորդ է կարծեմ խօսիլ *Պարահանդէսին վաղորդայնը*ին մէջ՝ Տիկին Յովսէփեանին, *Փայթալին* մէջ՝ *Սուրբիկ հանրմն* եւ *Փոթորիկին* մէջ՝ *Նարդիկին* եւ *Մամայիդ բարեւըրէ*, *Այրին*, *Միսը* նորավէպերուն մէջ յիշուած կիներուն վրայ, որոնք բարեբախտաբար հազուագիւտ ցուցանքներ են մեր ազգին մէջ, եւ սակայն իրենց անբարոյականութեամբ ոչ միայն չեն զգուեցներ զինքը, այլ երբեմն կը հիացնեն իսկ: